

II

*(Ոչ օրենսդրական ակտեր)***ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ****ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 թվականի օգոստոսի 22-ի****թիվ 801/2013 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

«Էլեկտրական եւ էլեկտրոնային կենցաղային եւ գրասենյակային սարքավորումների՝ սպասման ու անջատված ռեժիմներում էլեկտրաէներգիայի սպառման էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» թիվ 1275/2008 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող եւ «Հեռուստացույցների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» թիվ 642/2009 կանոնակարգը (ԵՄ) փոփոխող

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքի էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ սահմանելու շրջանակ սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,

էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում քննարկումներ անցկացնելուց հետո,

¹ ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10:

քանի որ՝

- 1) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգի¹ 16(2) հոդվածով նախատեսվում է կիրարկող միջոց, որը մի խումբ արտադրատեսակների դեպքում սպասման ռեժիմում կորուստների նվազեցումն ապահովող առաջնային միջոցներից մեկն է.
- 2) էլեկտրական եւ էլեկտրոնային կենցաղային եւ գրասենյակային սարքավորումների՝ ցանցային սպասման ռեժիմում էլեկտրաէներգիայի սպառման հետ կապված հարցին անդրադարձ է կատարվել 2006 թվականի հուլիսին իրականացված՝ սպասման եւ անջատված ռեժիմներում կորուստների վերաբերյալ տեխնիկական, շրջակա միջավայրի վրա ազդեցության եւ տնտեսական ուսումնասիրությամբ: Դրանով հանգել են եզրակացության, որ ցանցային կապակցելիությունը պետք է դառնար կենցաղային եւ գրասենյակային սարքավորումների ընդհանուր առանձնահատկություն: Էներգասպառող արտադրանքի էկոնախագծման հարցերով կարգավորիչ կոմիտեն 2008 թվականի հունիսի 21-ին առաջարկել է առանձին գործընթացով անդրադառնալ ցանցային սպասման ռեժիմի հետ կապված հարցին՝ տվյալ պահին տվյալների բացակայության պատճառով.
- 3) 2009-2011 թվականների էկոնախագծման աշխատանքային պլանով ցանցային սպասման ռեժիմը սահմանվել է որպես առաջնահերթություններից մեկը: Համապատասխանաբար, 2010-2011 թվականներին Հանձնաժողովն իրականացրել է նախապատրաստական ուսումնասիրություն, որով վերլուծվել են ցանցային սպասման ռեժիմի տեխնիկական, շրջակա միջավայրի վրա ազդեցության եւ տնտեսական հայեցակետերը: Ուսումնասիրությունը մշակվել է ԵՄ-ի եւ անդամ չհանդիսացող երկրների շահառուների ու շահագրգիռ կողմերի հետ համատեղ, իսկ արդյունքները հասանելի են դարձել հանրության համար.

¹ ՊՏ L 191, 22.7.2005թ., էջ 29:

- 4) ուսումնասիրությամբ Համայնքում վաճառվող էլեկտրական եւ էլեկտրոնային կենցաղային ու գրասենյակային սարքավորումների էներգասպառումը՝ կապված այն պայմանների հետ, որոնցով ապահովվում է սպասման ռեժիմը, 2010 թվականին գնահատվել է է 54 ՏՎտ/ժ, ինչը համապատասխանում է CO₂-ի 23 մլն տոննա արտանետմանը: Եթե չձեռնարկվեն հատուկ միջոցներ, ապա կանխատեսվում է, որ սպառումը 2020 թվականին կավելանա մինչև 90 ՏՎտ/ժ: Եզրակացությունը կայացել է նրանում, որ ցանցային սպասման ռեժիմի հետ կապված էլեկտրաէներգիայի սպառումը կարող է էապես կրճատվել: Սույն կանոնակարգով շուկայում պետք է ավելանան այն տեխնոլոգիաները, որոնց միջոցով բարելավվում է ցանցային սպասման ռեժիմի էներգաարդյունավետությունը՝ նախատեսվող էներգախնայողությունը սովորական սցենարի համեմատ 2020 թվականին հասցնելով 36 ՏՎտ/ժ, իսկ 2025-ին՝ 49 ՏՎտ/ժ.
- 5) մասնավորապես ուսումնասիրությունը ցույց է տվել, որ էներգիայի կառավարման այն ֆունկցիան, որով սարքավորումը հիմնական ֆունկցիան չիրականացնելիս դրվում է ցանցային սպասման ռեժիմ ունեցող վիճակում, կարելի է հնարավոր խնայողություններն ապահովելու համար: Ընդունված է համարել, որ արտաքին կամ ներքին ազդանշանով կրկին ակտիվացված սարքավորումը կարող է ակտիվ ռեժիմում գտնվել սահմանափակ ժամանակահատվածով՝ անկախ դրա հիմնական ֆունկցիայից (ֆունկցիաներից), օրինակ՝ կարողանալու սպասարկել կամ ներբեռնել ծրագրաշարը: Էներգիայի կառավարումը պետք է ապահովի, որ արտադրանքն առաջադրանքներն ավարտելուց հետո վերադառնա ցանցային սպասման ռեժիմ ունեցող վիճակին.
- 6) նախապատրաստական ուսումնասիրությամբ հանգել են այն եզրակացության, որ ցանցային սպասման ռեժիմի համար անհրաժեշտ է ցանցի աստիճանին ներկայացվող պահանջների տարբերակում: Այդ նպատակով սահմանվել են սահմանափակ քանակությամբ ՅԲՀ

սարքավորումներ, որոնց թվում են երթուղիչը, ցանցային փոխարկիչը, անլար ցանցի մուտքի կետը, հանգույցը եւ մոդեմը, որոնց հիմնական ֆունկցիան ցանցային թրաֆիկի մշակումն է: Քանի որ ակնկալվում է, որ այդ սարքավորումը պետք է անմիջապես արձագանքի մուտքային թրաֆիկին, ցանցային սպասման ռեժիմ ունեցող վիճակը կարող է համարժեք լինել չաշխատելու ռեժիմին:

- 7) հաշվի առնելով այն, որ սպասման եւ ցանցային սպասման պայմաններում ֆունկցիոնալ հնարավորությունները փոխկապակցված են, իսկ արտադրանքի ծավալը համարժեք է, 2011 թվականի սեպտեմբերի 14-ին Էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում պաշտպանել են այն տեսակետը, որ ցանցային սպասման ռեժիմի հետ կապված նախագծմանը ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն Հանձնաժողովի թիվ 1275/2008 կանոնակարգը (ԵՀ)¹ փոփոխող ակտով:
- 8) սպասման եւ անջատված ռեժիմներին, ինչպես նաեւ ցանցային սպասման ռեժիմին ներկայացվող պահանջները պետք է վերանայվեն միասին: Հաշվի առնելով, որ թիվ 1275/2008 կանոնակարգում (ԵՀ) սահմանված վերանայման օրը նախորդում է ցանցային սպասման պահանջների առաջին փուլն ուժի մեջ մտնելու օրվան, կանոնակարգի վերանայման օրը պետք է հետաձգվի մեկ տարով:
- 9) հաշվի առնելով, որ այն հեռուստացույցները, որոնք ենթակա են արտադրանքին հատուկ էկոնախագծման կիրարկող միջոցին, հանվել են թիվ 1275/2008 կանոնակարգի (ԵՀ) շրջանակից՝ հեռուստացույցների հետ կապված ցանցային սպասման ռեժիմի էկոնախագծմանը ներկայացվող պահանջները ներառված են Հանձնաժողովի թիվ 642/2009 (ԵՀ) կոնոնակարգում²: Ցանցային սպասման ռեժիմի վերաբերյալ տեխնիկական, շրջակա միջավայրի վրա ազդեցության եւ տնտեսական ուսումնասիրությամբ

¹ ՊՏ L 339, 18.12.2008թ., էջ 45:

² ՊՏ L 191, 23.7.2009թ., էջ 42:

գնահատվել է, որ հեռուստացույցների ցանցային սպասման ռեժիմի էկոնոմիկային ներկայացվող պահանջներով մինչև 2020 թվականը կառաջանա 10 ՏՎտ/ժ նախատեսվող խնայողություն.

- 10) սուրճի մեքենաների համար 2011 թվականի դեկտեմբերի 16-ի եւ 2012 թվականի ապրիլի 18-ի էկոնոմիկային ներկայացվող խորհրդատվական ֆորումում¹ պաշտպանել են այն տեսակետը, որ արտադրանքին հատուկ կիրարկող միջոց չպետք է ընդունվի, սակայն թիվ 1275/2008 կանոնակարգի (ԵՀ) պահանջները պետք է ավելի հստակեցվեն սուրճի մեքենաների համար.
- 11) այդ կանոնակարգով ներկայացվում են սուրճի մեքենաներին ներկայացվող էներգիայի կառավարման պահանջների կիրառման առանձնահատկությունները նախնական հետաձգման այն ժամանակի համար, որից հետո սարքավորումն ինքնաբար անցնում է սպասման/անջատված ռեժիմի.
- 12) էկոնոմիկային ներկայացվող վերաբերյալ հրահանգի համաձայն իրականացված¹ կենցաղային սուրճի մեքենաների վերաբերյալ տեխնիկական, շրջակա միջավայրի վրա ազդեցության եւ տնտեսական ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ հետաձգման այն ժամանակի սահմանափակումը, որից հետո սուրճի մեքենաներն ինքնաբար անցնում են սպասման/անջատված ռեժիմի, մինչև 2020 թվականը կհանգեցնի 2 ՏՎտ/ժ-ից ավելի տարեկան լրացուցիչ խնայողությունների: Սրանք հաշվի չեն առնվել թիվ 1275/2008 կանոնակարգի (ԵՀ) խնայողությունների վերաբերյալ ենթադրությունների մեջ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

¹ ՊՏ L 190, 18.7.2008թ., էջ 22:

Հոդված 1

Թիվ 1275/2008 կանոնակարգում (ԵՀ) կատարվող փոփոխությունները

Թիվ 1275/2008 կանոնակարգում (ԵՀ) կատարել հետեւյալ փոփոխությունները.

1) վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ «Էլեկտրական եւ էլեկտրոնային կենցաղային եւ գրասենյակային սարքավորումների՝ սպասման ու անջատված ռեժիմներում Էլեկտրաէներգիայի սպառման էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1275/2008 կանոնակարգ (ԵՀ)»

2) 1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

Սույն կանոնակարգով սահմանվում են Էլեկտրական եւ էլեկտրոնային կենցաղային ու գրասենյակային սարքավորումները շուկայահանելու համար սպասման եւ անջատման ռեժիմների, ինչպես նաեւ ցանցային սպասման, էլեկտրաէներգիայի սպառման հետ կապված էկոնախագծմանը ներկայացվող պահանջները:

Սույն կանոնակարգը չի կիրառվում էներգամատակարարման ցածրավոլտ արտաքին աղբյուրներով շուկայահանված էլեկտրական եւ էլեկտրոնային կենցաղային ու գրասենյակային սարքավորումների նկատմամբ՝ նախատեսված ձեով աշխատելու համար:».

3) 2-րդ հոդվածում ավելացնել հետեւյալ սահմանումները՝

- «10. «ցանց» նշանակում է հաղորդակցության ենթակառուցվածք՝ կապերի տեղաբանությամբ, կառուցվածքով, ներառյալ՝ ֆիզիկական բաղադրիչները, կազմակերպական սկզբունքները, հաղորդակցության ընթացակարգերը եւ ձեւաչափերը (հաղորդակարգեր)».
11. «ցանցային սպասման ռեժիմ» նշանակում է այնպիսի վիճակ, որի դեպքում սարքավորումները կարող են վերսկսել իրենց ֆունկցիան ցանցային կապակցման միջոցով ստացվող հեռակա գործարկված ազդանշանի օգնությամբ.
12. «հեռակա գործարկված ազդանշան» նշանակում է ազդանշան, որը ստացվում է ոչ սարքավորման ներսից՝ ցանցի միջոցով.
13. «ցանցի միացք» նշանակում է սարքավորման վրա տեղադրված ցանցային կապակցելիության լարային կամ անլար ֆիզիկական միջերես, որի միջոցով սարքավորումը կարող է հեռակա ակտիվացվել.
14. «ցանցի տրամաբանական միացք» նշանակում է ցանցային տեխնոլոգիա, որը գործում է ֆիզիկական ցանցի միացքի միջոցով.
15. «ֆիզիկական ցանցի միացք» նշանակում է ցանցի միացքի ֆիզիկական (սարքաշարային) կրիչ: Ֆիզիկական ցանցի միացքի մեջ կարող են տեղավորվել երկու կամ ավելի ցանցային տեխնոլոգիաներ.
16. «ցանցային հասանելիություն» նշանակում է սարքավորման՝ ցանցի միացքի կողմից հեռակա գործարկման ազդանշանը հայտնաբերելուց հետո ֆունկցիան վերսկսելու հնարավորություն.
17. «ցանցային սարքավորում» նշանակում է սարքավորում, որը կարող է կապակցվել ցանցին եւ ունի մեկ կամ մեկից ավելի ցանց միացքներ.
18. «ցանցային բարձր հասանելիությամբ ցանցային սարքավորում» (ՑԲՀ սարքավորում) նշանակում է սարքավորում, որն ունի հետեւյալ ֆունկցիոնալ հնարավորություններից մեկը կամ մեկից ավելին, սակայն

ոչ այլ մեկը՝ որպես հիմնական ֆունկցիա (ֆունկցիաներ)՝ երթուղիչ, ցանցային փոխարկիչ, անլար ցանցի մուտքի կետ, հանգույց, մոդեմ, VoIP հեռախոս, տեսահեռախոս.

19. «ցանցային բարձր հասանելիության ֆունկցիոնալ հնարավորություն ունեցող ցանցային սարքավորում» (ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ սարքավորում) նշանակում է սարքավորում, որն ունի երթուղիչի, ցանցային փոխարկիչի, անլար ցանցի մատչման կետի կամ դրանց համակցության ֆունկցիոնալ հնարավորությունը, սակայն ՑԲՀ սարքավորում չէ.
20. «երթուղիչ» նշանակում է ցանցային սարք, որի առաջնային ֆունկցիան է որոշել այն օպտիմալ ուղին, որով պետք է փոխանցվի ցանցային թրաֆիկը: Երթուղիչները փաթեթները մեկ ցանցից փոխանցում են մյուսին՝ ցանցային մակարդակի տեղեկությունների հիման վրա (L3).
21. «ցանցային փոխարկիչ» նշանակում է ցանցային սարք, որի առաջնային ֆունկցիան է զտել, փոխանցել եւ բաշխել շրջանակները՝ յուրաքանչյուր շրջանակի նպատակակետի հիման վրա: Բոլոր փոխարկիչները գործում են առնվազն տվյալների կապուղու մակարդակում (L2).
22. «անլար ցանցի մուտքի կետ» նշանակում է սարք, որի առաջնային ֆունկցիան է բազմաթիվ հաճախորդների համար ապահովել IEEE 802.11 (Wi-Fi) կապակցելիություն.
23. «հանգույց» նշանակում է ցանցային սարք, որը պարունակում է բազմաթիվ միացքներ եւ օգտագործվում է տեղային ցանցի հատվածները միացնելու համար.
24. «մոդեմ» նշանակում է սարք, որի առաջնային ֆունկցիան է լարային ցանցի միջոցով փոխանցել եւ ստանալ թվային մոդուլյացիայի ենթարկված անալոգային ազդանշաններ.

25. «տպագրության սարքավորում» նշանակում է սարքավորում, որով էլեկտրոնային եղանակով ներածված տվյալներն արտածվում են թղթի վրա: Տպագրության սարքավորումը կարող է ունենալ լրացուցիչ ֆունկցիաներ եւ կարող է շուկայահանվել որպես բազմաֆունկցիոնալ սարք կամ բազմաֆունկցիոնալ արտադրանք.
26. «լայնաֆորմատ տպագրության սարքավորում» նշանակում է տպագրության սարքավորում, որը նախատեսված է A2 եւ ավելի մեծ չափի կրիչի վրա տպագրության համար, այդ թվում՝ սարքավորում, որը նախատեսված է առնվազն 406 մմ լայնությամբ գլանափաթեթային կրիչի համար.
27. «հեռակա ներկայության համակարգ» նշանակում է բարձր հստակությամբ տեսահամաժողովների անցկացման եւ համագործակցության մասնագիտացված համակարգ, որը ներառում է օգտագործողի միջերես, բարձր հստակությամբ տեսախցիկ, ցուցադրիչ, ձայնային համակարգ եւ մշակման հնարավորություններ՝ տեսագրությունը եւ ձայնագրությունը կողավորելու կամ ապակողավորելու համար.
28. «կենցաղային սուրճի մեքենա» նշանակում է սուրճի պատրաստման ոչ առետրային հարմարանք.
29. «կաթիլային զտմամբ կենցաղային սուրճի մեքենա» նշանակում է կենցաղային սուրճի մեքենա, որը սուրճ քամելու համար օգտագործում է մակերեսային կլանման միջոցով զտում.
30. «տաքացնող տարր» նշանակում է սուրճի մեքենայի բաղադրիչ, որն էլեկտրականությունը փոխակերպում է ջերմության՝ ջուրը տաքացնելու համար.
31. «բաժակի նախատաքացում» նշանակում է սուրճի մեքենայի մեջ պահվող բաժակների տաքացման համար նախատեսված ֆունկցիա.

32. «Եփման փուլ» նշանակում է գործընթաց, որը պետք է ավարտին հասցվի՝ սուրճ ստանալու համար.
33. «ինքնամաքում» նշանակում է գործընթաց, որը սուրճի մեքենան իրականացնում է իր ներսի հատվածը մաքրելու համար: Այս գործընթացը կարող է լինել կա՛մ պարզ ողողում, կա՛մ հատուկ հավելանյութերի օգտագործմամբ լվանալու գործընթաց.
34. «նստվածքի հեռացում» նշանակում է գործընթաց, որը սուրճի մեքենան իրականացնում է ներսի հատվածից հնարավոր նստվածքը մասամբ կամ ամբողջությամբ հեռացնելու համար.
35. «սեղանադիր «բարակ» համակարգիչ» (սահմանափակ ծրագրային ապահովմամբ համակարգիչ) նշանակում է համակարգիչ, որը հիմնվում է հեռակա հաշվիչ ռեսուրսների հետ կապի (օրինակ՝ համակարգչային սպասարկիչ, հեռակա աշխատակայան) վրա՝ առաջնային ֆունկցիոնալ հնարավորություններ ստանալու համար, եւ չունի արտադրանքի մաս հանդիսացող հիշողության սկավառակային սարքեր: Սեղանադիր «բարակ» համակարգչի հիմնական բլոկը պետք է նախատեսված լինի մշտական վայրում (օրինակ՝ սեղանի վրա) օգտագործելու եւ ոչ դյուրակրության համար: Սեղանադիր բարակ համակարգիչները կարող են տեղեկություններն արտածել արտաքին կամ արտադրանքի մեջ ներառված լինելու դեպքում՝ ներքին ցուցադրիչի վրա.
36. «աշխատակայան» նշանակում է բարձրարդյունավետ, մեկ օգտագործողի կողմից շահագործվող համակարգիչ, որն առաջին հերթին օգտագործվում է գրաֆիկայի, համակարգչայնացված նախագծման, ծրագրաշարի մշակման, ֆինանսական ու գիտական ծրագիրների եւ բարձր հաշվիչ հզորություն պահանջող այլ առաջադրանքների համար, եւ որն ունի հետեւյալ բնութագրերը՝
- ա) ունի առնվազն 15 000 ժամ խափանումների ժամանակամիջոց (MTBF).

- բ) ունի սխալների ուղղման ծածկագիր (ECC) եւ (կամ) բուֆերացված հիշողություն.
- գ) համապատասխանում է հետեւյալ հինգ բնութագրերից երեքին՝
- 1) ունի լրացուցիչ սնուցում՝ բարձրակարգ գրաֆիկական քարտերի համար (այսինքն՝ արտաքին բաղադրիչների միջկապակցման (PCI)-E 6 ցցիկանի 12Վ լրացուցիչ սնուցման աղբյուր).
 - 2) դրա համակարգը մայրական սալիկի վրա մետաղալարով ամրանավորված է ավելի, քան x4 PCI-E համար՝ ի հավելումն գրաֆիկական բնիկի (բնիկների) եւ (կամ) PCI-X աջակցման.
 - 3) չի ապահովում հիշողության միասնական մատչման (<ՄՄ) գրաֆիկա.
 - 4) ներառում է հինգ կամ ավելի PCI, PCI-E կամ PCI-X բնիկներ.
 - 5) ունի բազմակի մշակիչների աջակցման հնարավորություն՝ երկու կամ ավելի ԿՄՍ-ների համար (պետք է աջակցի ֆիզիկապես առանձին ԿՄՍ փաթեթներ/բնիկներ, այսինքն՝ այս պահանջը չի բավարարվում, եթե աջակցվում է մեկ բազմամիջուկ ԿՄՍ).

37. «շարժական աշխատակայան» նշանակում է բարձրարդյունավետ, մեկ օգտագործողի կողմից շահագործվող համակարգիչ, որն առաջին հերթին օգտագործվում է գրաֆիկայի, համակարգչայնացված նախագծման, ծրագրաշարի մշակման, ֆինանսական ու գիտական ծրագիրների եւ բարձր հաշվիչ հզորություն պահանջող այլ գործողությունների համար՝ բացառությամբ խաղերի, եւ որը հատուկ նախատեսված է դյուրակրության եւ փոփոխական հոսանքի աղբյուրին ուղիղ միացմամբ կամ առանց դրա երկար ժամանակահատվածի ընթացքում աշխատելու համար: Շարժական աշխատակայաններն

ունեն ներկառուցված դիսփլեյ եւ կարող են սնուցվել ներկառուցված մարտկոցից կամ դյուրակիր էներգասնուցման այլ աղբյուրից: Շարժական աշխատակայանների մեծ մասն օգտագործում է սնուցման արտաքին աղբյուրներ եւ մեծ մասն ունի ներկառուցված ստեղնաշար եւ մկնիկ:

Շարժական աշխատակայանն ունի հետեւյալ բնութագրերը՝

- ա) ունի առնվազն 13 000 ժամ խափանումների ժամանակամիջոց (MTBF).
- բ) ունի առնվազն մեկ դիսկրետային տեսաքարտ (dGfx), որը համապատասխանում է G3 (ՊԲ տվյալների լայնությունը > 128-բիթ), G4, G5, G6 կամ G7 դասակարգմանը.
- գ) ունի հիշողության երեք կամ ավելի ներքին սարքերի ներառման աջակցում.
- դ) ունի առնվազն 32 Գբ համակարգային հիշողության աջակցում.

38. «սակավահզոր սպասարկիչ» նշանակում է համակարգչի տեսակ, որը սովորաբար օգտագործում է սեղանադիր համակարգչի բաղադրիչներ՝ սեղանադիր կառուցվածքով, սակայն առաջին հերթին նախատեսված է այլ համակարգիչների համար որպես հիշողության պահեստ ծառայելու եւ այնպիսի ֆունկցիաներ կատարելու համար, ինչպիսիք են ցանցային ենթակառուցվածքի ծառայությունների տրամադրումը եւ տվյալների-մեդիայի պահպանումը, եւ որն ունի հետեւյալ բնութագրերը՝

- ա) նախագծված է «պատվանդան», «աշտարակ» կամ սեղանադիր համակարգիչներին նման որեւէ այլ ձեռով⁵ այնպես, որ տվյալների ցանկացած մշակում, պահում եւ ցանցային միջերեսում ամփոփված լինի մեկ իրանում.
- բ) նախատեսված է օրական 24 ժամ եւ շաբաթական 7 օր աշխատելու համար.

- գ) առաջին հերթին նախատեսված է միաժամանակ բազմաթիվ օգտագործողներից բաղկացած միջավայրում աշխատանքի համար՝ ցանցային հաճախորդների մոդուլների միջոցով սպասարկելով մի քանի օգտագործողների.
- դ) տեղադրված համակարգով շուկայահանվելու դեպքում օպերացիոն համակարգը նախատեսված է տնային սպասարկչի կամ սպասարկիչների ցածրարդյունավետ ծրագիրների համար.
- ե) չի շուկայահանվում դիսկրետային տեսաքարտով (dGfx), որը համապատասխանում է G1 դասակարգումից բացի այլ դասակարգման.
39. «համակարգչային սպասարկիչ» նշանակում է համակարգչային արտադրանք, որը տրամադրում է ծառայություններ եւ կառավարում է սպասառու սարքերի ցանցային ռեսուրսները, ինչպիսիք են սեղանադիր համակարգիչները, նոութբուք տեսակի համակարգիչները, սեղանադիր «բարակ» համակարգիչները, համացանցի հաղորդակարգի (IP) հեռախոսները կամ այլ համակարգչային սպասարկիչներ: Համակարգչային սպասարկիչը սովորաբար շուկայահանվում է տվյալների կենտրոններում եւ գրասենյակային/կորպորատիվ միջավայրերում օգտագործման համար: Համակարգչային սպասարկչի մատչումը կատարվում է հիմնականում ցանցային միացումների, այլ ոչ թե անմիջապես օգտագործողի կողմից ներածման սարքերի միջոցով, ինչպիսիք են ստեղնաշարը կամ մկնիկը:
- Համակարգչային սպասարկիչն ունի հետեւյալ բնութագրերը՝
- ա) նախատեսված է համակարգչային սպասարկիչների օպերացիոն համակարգերի (ՕՀ) եւ (կամ) հիպերվիզորների (ՕՀ-ների կառավարման ծրագրերի) աջակցման համար եւ թիրախավորված է օգտագործողի կողմից տեղադրված կորպորատիվ ծրագիրներն աշխատացնելու համար.

- բ) ունի սխալների ուղղման ծածկագիր (ECC) եւ (կամ) բուֆերացված հիշողություն (ներառյալ եւ՝ բուֆերացված երկկողմանի կապերով հիշողության մոդուլները (DIMM-ներ), եւ՝ սալիկի վրա բուֆերացված (BOB) կազմաձեւերը).
- գ) շուկայահանված է փոփոխական-հաստատուն հոսանքի մեկ կամ մի քանի սնուցման աղբյուրներով.
- դ) բոլոր մշակիչներն ունեն մատչելիություն ընդհանուր համակարգային հիշողությանը եւ անկախ կերպով տեսանելի են մեկ ԳՀ-ի կամ հիպերվիզորի համար:».

4) 3-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 3

Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները

Սպասման եւ անջատված ռեժիմներում, ինչպես նաեւ ցանցային սպասման ռեժիմում էլեկտրականության սպառման հետ կապված էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանված են II հավելվածում:».

5) 7-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը պետք է վերանայի սույն կանոնակարգը եւ վերանայման արդյունքները ներկայացնի Խորհրդատվական ֆորում ոչ ուշ, քան 2016 թվականի հունվարի 7-ին՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը: Վերանայմամբ անդրադարձ կկատարվի մասնավորապես սպասման/անջատված ռեժիմի գործողության շրջանակին ու դրան ներկայացվող պահանջներին եւ

նպատակահարմարությանը, ինչպես նաև իրականացման երրորդ փուլի հետ կապված ցանցային սպասման ռեժիմին ներկայացվող պահանջների մակարդակին (2019 թվական):

Վերանայմամբ կարող է, ի թիվս այլնի, անդրադարձ կատարվել հեռակառավարման միջոցով աշխատող էլեկտրական շարժիչներով սարքավորված մասնագիտական սարքավորումներին եւ արտադրանքին:».

6) 8-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 8

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրը:

II հավելվածի 1-ին կետը կիրառվում է 2010 թվականի հունվարի 7-ից:

II հավելվածի 2-րդ կետը կիրառվում է 2013 թվականի հունվարի 7-ից:

II հավելվածի 3-րդ կետը կիրառվում է 2015 թվականի հունվարի 1-ից:

II հավելվածի 4-րդ կետը կիրառվում է 2017 թվականի հունվարի 1-ից:

II հավելվածի 5-րդ կետը կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից:

II հավելվածի 6-րդ կետը կիրառվում է 2015 թվականի հունվարի 1-ից:

II հավելվածի 7-րդ կետը կիրառվում է 2015 թվականի հունվարի 1-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ ուղղակիորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:»:

7) II հավելվածում կատարել հետեւյալ փոփոխությունները.

ա) 2-րդ կետի «դ» պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«դ) Էներգիայի կառավարումը բոլոր սարքավորումների համար՝ բացի ցանցային սարքավորումից

Սարքավորումը պետք է, եթե դա չի համապատասխանում նպատակային օգտագործմանը, առաջարկի էներգասպառման կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի հնարավորություն: Այն դեպքում, երբ սարքավորումը չի կատարում հիմնական ֆունկցիան, իսկ էներգասպառող մյուս արտադրանքը (արտադրանքները) կախված չէ դրա ֆունկցիայից, էներգիայի կառավարման ֆունկցիան, նպատակային օգտագործմանը համապատասխան, հնարավոր ամենակարճ ժամանակահատվածից հետո պետք է սարքավորումն ինքնաբար փոխարկի՝

- սպասման ռեժիմի, կամ
- անջատված ռեժիմի, կամ
- այլ վիճակի, որը չի գերազանցում անջատված ռեժիմում եւ (կամ) սպասման ռեժիմում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջներն այն դեպքում, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին:

Էներգիայի կառավարման ֆունկցիան պետք է ակտիվացվի:».

բ) ավելացնել հետեւյալ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ եւ 7-րդ կետերը.

«3. 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝

ա) Անլար ցանցային կապակցումը (կապակցումները) ապասկտիվացնելու հնարավորությունը.

ցանկացած այնպիսի ցանցային սարքավորում, որը կարող է կապակցվել անլար ցանցին, պետք է օգտագործողին առաջարկի անլար ցանցային միացումը (միացումները)

ապասկտիվացնելու հնարավորություն: Այս պահանջը չի կիրառվում այն արտադրանքների նկատմամբ, որոնք հիմնված են նպատակային օգտագործման համար նախատեսված մեկ անլար ցանցային միացման վրա եւ չունեն որեւէ լարային ցանցային միացում.

բ) Էներգիայի կառավարումը ցանցային սարքավորումների համար.

սարքավորումը պետք է առաջարկի էներգիայի կառավարման կամ նմանատիպ ֆունկցիա, եթե դա աննպատակահարմար չէ նպատակային օգտագործման համար:

Այն դեպքում, երբ սարքավորումը չի կատարում հիմնական ֆունկցիան, իսկ էներգասպառող մյուս արտադրանքը (արտադրանքները) կախված չէ դրա ֆունկցիայից, էներգիայի կառավարման ֆունկցիան, նպատակային օգտագործմանը համապատասխան, հնարավոր ամենակարճ ժամանակահատվածից հետո պետք է սարքավորումն ինքնաբար փոխարկի ցանցային սպասման վիճակի:

Ցանցային սպասման ռեժիմի ապահովման վիճակում էներգիայի կառավարման ֆունկցիան կարող է ինքնաբար սարքավորումը փոխարկել սպասման ռեժիմի կամ անջատված ռեժիմի կամ այնպիսի այլ վիճակի, որը չի գերազանցում սպասման եւ (կամ) անջատված ռեժիմների ներկայացվող էներգասպառման կիրառելի պահանջները:

Էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան պետք է հասանելի լինի ցանցային սարքավորման ցանցի բոլոր միացքների համար:

Էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան պետք է ակտիվացվի, եթե ցանցի բոլոր միացքներն ապակտիվացված չեն: Այդ վերջին դեպքում էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան պետք է ակտիվացվի, եթե ցանցի միացքներից որեւէ մեկն ակտիվացված է:

Դեֆուլտային այն ժամանակահատվածը, որից հետո էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան սարքավորումն ինքնաբար փոխարկում է ցանցային սպասման ռեժիմ ապահովող վիճակի, չպետք է գերազանցի 20 րոպեն.

- գ) Սպասման մեկ կամ ավելի ռեժիմով ցանցային սարքավորումը պետք է համապատասխանի սպասման այս ռեժիմին (ռեժիմներին) ներկայացվող պահանջներին այն դեպքում, երբ ցանցի բոլոր միացքներն ապակտիվացված են.
- դ) ՑԲՀ սարքավորումներից բացի այլ ցանցային սարքավորումներ պետք է համապատասխանեն 2(դ)կետի դրույթներին այն դեպքում, երբ ցանցի բոլոր միացքներն ապակտիվացված են.
- ե) Էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմն ապահովող վիճակում.

ՑԲՀ սարքավորման կամ ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ սարքավորման էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին սարքավորումը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով, չպետք է գերազանցի 12,00 Վտ-ը:

Ցանցային այլ սարքավորումների էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին սարքավորումը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով, չպետք է գերազանցի 6,00 Վտ-ը:

«Ե» կետում սահմանված էներգասպառման հետ կապված սահմանափակումները չեն կիրառվում հետեւյալի նկատմամբ՝

- i) 750 Վտ-ից ավելի անվանական հզորությամբ էներգասնուցմամբ տպագրության սարքավորում.
- ii) լայնաֆորմատ տպագրության սարքավորում.
- iii) հեռակա ներկայության համակարգեր.
- iv) սեղանադիր «բարակ» համակարգիչներ.
- v) աշխատակայաններ.
- vi) շարժական աշխատակայաններ.
- vii) սակավահզոր սպասարկիչներ.
- viii) համակարգչային սպասարկիչներ:

4. 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝

Բացի 3(ա) եւ (բ) կետերում սահմանված պահանջներից՝ կիրառվում են նաեւ հետեւյալ դրույթները.

- ա) Այն ցանցային սարքավորումը, որն ունի սպասման մեկ կամ մեկից ավելի ռեժիմ (ռեժիմներ), պետք է համապատասխանի սպասման այս ռեժիմին (ռեժիմներին) ներկայացվող պահանջներին այն դեպքում, երբ լարային ցանցի բոլոր միացքներն անջատված են, եւ երբ անլար ցանցի բոլոր միացքներն ապակտիվացված են.

- բ) ՑԲՀ սարքավորումից բացի այլ ցանցային սարքավորումներ պետք է համապատասխանեն 2(դ) կետով սահմանված դրույթներին այն դեպքում, երբ հաղորդալարով ցանցի բոլոր միացքներն անջատված են, եւ երբ անլար ցանցի բոլոր միացքներն ապասկտիվացված են.
- գ) Էներգասպառումը «ցանցային սպասման ռեժիմ» ապահովող վիճակում.

ՑԲՀ սարքավորման կամ ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ սարքավորման էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին սարքավորումը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով, չպետք է գերազանցի 8,00 Վտ-ը:

Ցանցային այլ սարքավորումների էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին սարքավորումը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով, չպետք է գերազանցի 3,00 Վտ-ը:

«Գ» կետում սահմանված էներգասպառման հետ կապված սահմանափակումները կիրառվում են հետեւյալի նկատմամբ՝

- i) լայնաֆորմատ տպագրության սարքավորումներ.
- ii) սեղանադիր «բարակ» համակարգիչներ.
- iii) աշխատակայաններ.
- iv) շարժական աշխատակայաններ.
- v) սակավահզոր սպասարկիչներ.
- vi) համակարգչային սպասարկիչներ:

5. 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝

Բացի 3(ա) եւ (բ) կետերում, ինչպես նաեւ 4(ա), (բ) եւ (գ) կետերում սահմանված պահանջներից՝ ՑԲԱ սարքավորումից կամ ՑԲԱ ֆունկցիոնալ հնարավորությամբ սարքավորումից բացի այլ ցանցային սարքավորումների համար կիրառվում է հետեւյալ դրույթը՝

ՑԲՀ սարքավորումից կամ ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ սարքավորումից բացի այլ ցանցային սարքավորումների էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին սարքավորումը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով, չպետք է գերազանցի 2,00 Վտ-ն:

6. 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝

Սուրճի մեքենաների համար երկարաձգման այն ժամանակը, որից հետո արտադրանքն ինքնաբար փոխարկվում է II հավելվածի 2-րդ կետի «դ» պարբերությունում նշված ռեժիմների եւ պայմանների, պետք է լինի հետեւյալը՝

— հերմետիկ տարայում սուրճը պահող կաթիլային զտմամբ կենցաղային սուրճի մեքենաների դեպքում՝ առավելագույնը հինգ րոպե՝ եփման վերջին փուլն ավարտելուց հետո, կամ 30 րոպե՝ նստվածքի հեռացման կամ ինքնամաքման գործընթացն ավարտելուց հետո,

— ոչ հերմետիկ տարայում սուրճը պահող կաթիլային զտմամբ կենցաղային սուրճի մեքենաների դեպքում՝ առավելագույնը 40 րոպե՝ վերջին եփման փուլն ավարտելուց հետո, կամ 30 րոպե՝ նստվածքի հեռացման կամ ինքնամաքման գործընթացն ավարտելուց հետո,

— կաթիլային զտմամբ սուրճի մեքենաներից բացի այլ կենցաղային սուրճի մեքենաների դեպքում՝ առավելագույնը 30 րոպե՝ վերջին եփման փուլն ավարտելուց հետո, կամ առավելագույնը 30 րոպե՝ տաքացման տարրն ակտիվացնելուց հետո, կամ առավելագույնը 60 րոպե՝ բաժակի նախատաքացման ֆունկցիան ակտիվացնելուց հետո, կամ առավելագույնը 30 րոպե՝ նստվածքի հեռացման կամ ինքնամաքրման գործընթացն ավարտելուց հետո, եթե չի առաջացել նախազգուշացման ազդանշան, որով օգտագործողներից պահանջվել է միջամտություն՝ հնարավոր վնասը կամ պատահարը կանխելու համար:

II հավելվածի 2(դ) կետում սահմանված էկոնախագծմանը ներկայացվող պահանջները մինչև վերոնշյալը ժամկետը չեն կիրառվում:

7. Արտադրանքի մասին տեղեկություններին ներկայացվող պահանջները.

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ արտադրողների ազատ հասանելիություն ունեցող կայքերում պետք է տեսանելիորեն ցուցադրված լինեն ցանցային սարքավորումների վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները՝

ա) սպասման եւ (կամ) անջատված յուրաքանչյուր այնպիսի ռեժիմի, ինչպես նաեւ ցանցային սպասման ռեժիմն ապահովող այնպիսի վիճակի վերաբերյալ, որին սարքավորումը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով.

— էներգասպառման վերաբերյալ տվյալներ՝ արտահայտված Վատտով եւ կլորացված մինչեւ առաջին տասնորդական նիշը,

— այն ժամանակահատվածը, որից հետո էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան սարքավորումն ինքնաբար փոխարկում է սպասման ռեժիմի եւ (կամ) անջատման ռեժիմի եւ (կամ) ցանցային սպասման ռեժիմ ապահովող վիճակի.

բ) ցանցային սպասման ռեժիմում արտադրանքի էներգասպառումը, եթե լարային ցանցի բոլոր միացքները միացված են, եւ անլար ցանցի բոլոր միացքներն ակտիվացված են.

գ) ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է ակտիվացնել եւ ապասկտիվացնել անլար ցանցի միացքները:

«Բ» կետում նշված՝ ցանցային սպասման ռեժիմում արտադրանքի էներգասպառումը եւ «գ» կետում նշված ուղեցույցը նույնպես պետք է ներառվեն օգտատիրոջ ձեռնարկում:».

գ) 3-րդ կետը փոխարինել նոր 8-րդ կետով՝

«8. Չափումները

1(ա) եւ (բ) կետերում, 2(ա) եւ (բ), 3(ե) եւ 4(գ) կետերում, 5-րդ կետում նշված էներգասպառումը, ինչպես նաեւ 6-րդ կետում նշված երկարաձգման ժամանակահատվածները պետք է սահմանվեն վստահելի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգով, որով հաշվի են առնվում լայն ճանաչում ունեցող ժամանակակից մակարդակները:».

դ) 4-րդ կետը փոխարինել նոր 9-րդ կետով՝

«9. Արտադրողների կողմից տրամադրվող տեղեկատվությունը

4-րդ հոդվածի համաձայն՝ տեխնիկական փաստաթղթերը համապատասխանության գնահատման նպատակներով պետք է պարունակեն հետեւյալ տարրերը.

ա) սպասման եւ (կամ) անջատված յուրաքանչյուր ռեժիմի համար՝

- էներգասպառման վերաբերյալ տվյալները՝ արտահայտված Վատտով եւ կլորացված մինչեւ առաջին տասնորդական նիշը,
- կիրառված չափման մեթոդը,
- սարքավորման ռեժիմի ընտրության կամ ծրագրման կարգի նկարագիրը,
- այն իրադարձությունների հերթականությունը, որոնք հանգեցնում են այն վիճակի, որի դեպքում սարքավորումն ինքնաբար փոխարկում է ռեժիմները,
- ցանկացած ծանոթագրություն, որը վերաբերում է սարքի աշխատանքին, օրինակ՝ տեղեկություններ այն մասին, թե ինչպես է օգտագործողը սարքը փոխարկում ցանցային սպասում ունեցող վիճակի,
- եթե կիրառելի է, դեֆոլտային այն ժամանակահատվածը, որից հետո էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան սարքավորումը փոխարկել է կիրառելի ցածր էներգասպառման ռեժիմի կամ վիճակի.

բ) ցանցային սարքավորումների համար՝

- ցանցի միացքների քանակը եւ տեսակը՝ բացառությամբ անլար ցանցի միացքների, եւ թե սարքավորման վրա որտեղ են գտնվում այդ միացքները. մասնավորապես պետք է հայտարարել, եթե միեւնույն ֆիզիկական ցանցի միացքը տեղավորում է ցանցի միացքների երկու կամ ավելի տեսակներ.
- թե արդյոք մինչեւ առաքումը ցանցի բոլոր միացքներն ապասկտիվացվում են.

— թե արդյոք սարքավորումը որակավորվում է որպես ՑԲՀ սարքավորում կամ ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ սարքավորում. եթե որեւէ տեղեկություն չի տրամադրվում, ապա համարվում է, որ դա այդպես չէ.

եւ ցանցի յուրաքանչյուր միացքի համար՝

— դեֆոլտային այն ժամանակահատվածը, որից հետո էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան սարքավորումը փոխարկում է ցանցային սպասում ապահովող վիճակի.

— այն ազդանշանը, որն օգտագործվում է սարքավորումը վերաակտիվացնելու համար.

— (առավելագույն) էներգաարդյունավետության մասնագրերը.

— սարքավորման (առավելագույն) էներգասպառման մասնագրերը ցանցային սպասում ապահովող այնպիսի վիճակում, որին էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ այլ ֆունկցիա կփոխարկի սարքավորումը, եթե հեռակա ակտիվացման համար օգտագործվում է միայն այս միացքը.

— սարքավորման կողմից օգտագործվող հաղորդակցության հաղորդակարգը:

Եթե որեւէ տեղեկություն չի տրամադրվում, ապա համարվում է, որ սարքավորումը ցանցային սարքավորում չէ, եթե այն չի ապահովում երթուղիչի, ցանցային փոխարկիչի, անլար ցանցի մուտքի կետի (տերմինալ չհանդիսացող), հանգույցի, մոդեմի, VoIP հեռախոսի, տեսահեռախոսի ֆունկցիոնալ հնարավորություններ.

գ) փորձարկման հարաչափերը չափման համար՝

- շրջապատող ջերմաստիճան.
- փորձարկման լարումը՝ արտահայտված Վ-ով, եւ հաճախականությունը՝ արտահայտված Հg-ով.
- էլեկտրամատակարարման համակարգի ընդհանուր ոչ գծային աղավաղումները.
- տեղեկություններ եւ փաստաթղթեր՝ էլեկտրական փորձարկման համար օգտագործված գործիքակազմի, կարգավորման եւ շղթայի մասին.

դ) ըստ անհրաժեշտության՝ 1(գ) կետում կամ 2(գ) եւ (կամ) 2(դ) եւ (կամ) 3(բ) կետերում սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար պահանջվող սարքավորումների բնութագրերը, ներառյալ՝ ինքնաբար սպասման կամ անջատված ռեժիմի կամ այլ վիճակի անցնելու համար պահանջվող ժամանակը, որի դեպքում չեն գերազանցվում անջատված ռեժիմում եւ (կամ) սպասման ռեժիմում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները:

Մասնավորապես, անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվի տեխնիկական հիմնավորում այն մասին, որ 1(գ) կետում կամ 2(գ) եւ (կամ) 2(դ) եւ (կամ) 3(բ) կետերում սահմանված պահանջները չեն համապատասխանում սարքավորման նպատակային օգտագործմանը: Մեկ կամ մեկից ավելի ցանցային միացումների աջակցելու կամ հեռակա գործարկման ազդանշանին սպասելու անհրաժեշտությունը չի համարվում տեխնիկական հիմնավորում 2(դ) կետում սահմանված պահանջներից ազատման համար այն սարքավորման դեպքում, որն արտադրողի կողմից չի սահմանվել որպես ցանցային սարքավորում:».

8) III հավելվածին ավելացնել հետևյալը՝

«II հավելվածի 2(դ) կետում սահմանված պահանջների առնչությամբ՝ անդամ պետությունների մարմինները պետք է օգտագործեն վերոնշյալ կիրառելի ընթացակարգը՝ չափելու համար էներգասպառումն այն բանից հետո, երբ էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան սարքավորումը փոխարկել է կիրառելի ռեժիմի կամ վիճակի:

II հավելվածի 3(գ) եւ 4(ա) կետերում սահմանված պահանջների առնչությամբ՝ անդամ պետությունների մարմինները պետք է օգտվեն վերոնշյալ կիրառելի ընթացակարգից այն բանից հետո, երբ սարքի ցանցի բոլոր միացքները համապատասխան դեպքերում ապակտիվացվել եւ (կամ) անջատվել են:

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգի^(*) 3(2) հոդվածում նշված շուկայի հսկիչ ստուգումներ կատարելիս անդամ պետությունների մարմինները կիրառելիության դեպքում պետք է II հավելվածի 3-րդ եւ 4-րդ կետերում սահմանված պահանջների դեպքում կիրառեն ստուգման հետևյալ ընթացակարգը:

Անդամ պետությունների մարմինները պետք է փորձարկեն մեկ միավոր՝ հետևյալ ձևով՝

Եթե սարքավորումն ունի մեկ տեսակի ցանցի միացք, եւ եթե առկա են այդ տեսակի երկու կամ ավելի միացքներ, ինչպես նշված է տեխնիկական փաստաթղթերում, ապա պատահականության սկզբունքով ընտրվում է այդ միացքներից մեկը, եւ այդ միացքը կապակցվում է միացքի առավելագույն տեխնիկական պահանջը բավարարող համապատասխան ցանցին: Մի քանի նույն տեսակի անլար ցանցի միացքների առկայության պարագայում անլար մյուս միացքները հնարավորության դեպքում պետք է ապակտիվացվեն: II հավելվածի 3-րդ կետում սահմանված պահանջների

*ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10:

ստուգման համար մի քանի նույն տեսակի լարային ցանցի միացքների առկայության պարագայում լարային ցանցի մյուս միացքները հնարավորության դեպքում պետք է ապասկտիվացվեն: Եթե առկա է միայն մեկ ցանցի միացք, ապա այդ միացքը կապակցվում է միացքի առավելագույն տեխնիկական պահանջները բավարարող համապատասխան ցանցին:

Սարքը դրվում է աշխատանքի ռեժիմի վրա: Սարքն աշխատանքի ռեժիմում պատշաճ կերպով աշխատելուց հետո թույլատրվում է, որ այն անցնի ցանցային սպասման ռեժիմն ապահովող ռեժիմի, եւ չափվում է էներգասպառումը: Այնուհետեւ ցանցի միացքի միջոցով սարքավորմանը տրվում է համապատասխան ազդանշան, եւ ստուգվում է, թե արդյոք սարքավորումը կրկին ակտիվացել է:

Եթե սարքավորումը ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի համար ունի մեկից ավելի տեսակի ցանցի միացք, ինչպես նշված է տեխնիկական փաստաթղթերում, ապա հետեւյալ ընթացակարգը կրկնվում է:

Եթե առկա են ցանցի միացքների երկու կամ ավելի տեսակներ, ապա ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի համար պատահականության սկզբունքով ընտրվում է մեկ միացք, եւ այդ միացքը կապակցվում է միացքի առավելագույն տեխնիկական պահանջը բավարարող համապատասխան ցանցին:

Եթե ցանցի միացքի կոնկրետ տեսակի դեպքում առկա է միայն մեկ ցանցի միացք, ապա այդ միացքը կապակցվում է միացքի առավելագույն տեխնիկական պահանջները բավարարող համապատասխան ցանցին: Չօգտագործված անլար միացքները հնարավորության դեպքում պետք է ապասկտիվացվեն: II հավելվածի 3-րդ կետում սահմանված պահանջների ստուգման պարագայում չօգտագործված լարային ցանցի միացքները հնարավորության դեպքում պետք է ապասկտիվացվեն:

Սարքը դրվում է աշխատանքի ռեժիմի վրա: Սարքն աշխատանքի ռեժիմում պատշաճ կերպով աշխատելուց հետո թույլատրվում է, որ այն անցնի ցանցային սպասման ռեժիմն ապահովող ռեժիմի, եւ չափվում է էներգասպառումը: Այնուհետեւ ցանցի միացքի միջոցով սարքավորմանը տրվում է համապատասխան ազդանշան եւ ստուգվում է, թե արդյոք սարքավորումը կրկին ակտիվացել է: Եթե մեկ ֆիզիկական ցանցի միացքը բաժանված է (տրամաբանական) ցանցի միացքների երկու կամ ավելի տեսակների միջեւ, ապա այս ընթացակարգը կրկնվում է տրամաբանական ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի համար՝ տրամաբանորեն անջատելով տրամաբանական ցանցի մյուս միացքները:

Մոդելը համարվում է սույն կանոնակարգին համապատասխանող, եթե ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի դեպքում արդյունքները սահմանային արժեքը չեն գերազանցում ավելի, քան 10%-ով:

Հակառակ դեպքում ստուգման են ենթարկվում եւս երեք միավոր: Մակնիշը համարվում է սույն կանոնակարգին համապատասխանող, եթե ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի համար վերջին երեք ստուգումների արդյունքների միջինը չի գերազանցում սահմանային թույլատրելի արժեքն ավելի, քան 10%-ով:

Հակառակ դեպքում մոդելը համարվում է չհամապատասխանող:

Անդամ պետության մարմինները պետք է ստուգման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ տրամադրեն մյուս անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին՝ մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Բացի վերելում սահմանված ընթացակարգերից՝ անդամ պետությունների մարմինները պետք է օգտվեն վստահելի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերից, որոնցով հաշվի են առնվում լայն ճանաչում

ունեցող ժամանակակից մեթոդները, այդ թվում՝ այն մեթոդները, որոնք սահմանված են այն փաստաթղթերում, որոնց համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*:».

9) IV հավելվածում՝ վերջին նախադասությունից հետո, ավելացնել հետեյալը՝

«Ցանցային սպասման ռեժիմը՝ 3 Վտ՝ ՑԲՀ սարքավորումների համար, 1 Վտ կամ դրանից պակաս՝ ոչ ՑԲՀ սարքավորումների համար:»:

Հոդված 2

Թիվ 642/2009 կանոնակարգում (ԵՀ) կատարվող փոփոխությունները

Թիվ 642/2009 կանոնակարգում (ԵՀ) կատարել հետեյալ փոփոխությունները.

1) 2-րդ հոդվածում ավելացնել հետեյալ սահմանումները՝

«12. «ցանց» նշանակում է ցանցային ենթակառուցվածք՝ կապերի տեղաբանությամբ, կառուցվածքով, ներառյալ՝ ֆիզիկական բաղադրիչները, կազմակերպական սկզբունքները, հաղորդակցության ընթացակարգերը եւ ձեւաչափերը (հաղորդակարգեր).

13. «ցանցի միացք» նշանակում է հեռուստացույցի մեջ տեղադրված ցանցային միացման լարային կամ անլար ֆիզիկական միջերես, որի միջոցով հեռուստացույցը կարող է հեռակա ակտիվացվել.

14. «կապակցված հեռուստացույց» նշանակում է հեռուստացույց, որը կարող է կապակցվել ցանցին եւ ունի մեկ կամ մեկից ավելի ցանցի միացքներ.

15. «ցանցային հասանելիություն» նշանակում է հեռուստացույցի՝ ցանցի միացքի միջոցով հեռակա գործարկման ազդանշանը հայտնաբերելուց հետո ֆունկցիան վերսկսելու հնարավորություն.

16. «հեռակա գործարկման ազդանշան» նշանակում է ազդանշան, որը ցանցի միջոցով ստացվում է հեռուստացույցի արտաքին կողմից.
 17. «ցանցային սպասման ռեժիմ» նշանակում է այնպիսի վիճակ, որի դեպքում հեռուստացույցը կարող է վերսկսել ֆունկցիան ցանցային միացման միջոցով հեռակա գործարկման ազդանշանի օգնությամբ.
 18. «ցանցային բարձր հասանելիության ֆունկցիոնալ հնարավորություն ունեցող ցանցային հեռուստացույց» (ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ հեռուստացույց) նշանակում է հեռուստացույց, որն ունի երթուղիչի, ցանցային փոխարկիչի, անլար ցանցի մուտքի կետի (որը չի համարվում տերմինալ) կամ դրանց համակցության ֆունկցիոնալ հնարավորություն.
 19. «երթուղիչ» նշանակում է ցանցային սարք, որը որպես իր առաջնային ֆունկցիա որոշում է այն օպտիմալ ուղին, որով պետք է փոխանցվի ցանցային թրաֆիկը: Երթուղիչները փաթեթները փոխանցում են մեկ ցանցից մյուսը՝ ցանցային մակարդակի տեղեկությունների հիման վրա (L3).
 20. «ցանցային փոխարկիչ» նշանակում է ցանցային սարք, որը որպես իր առաջնային ֆունկցիա զտում, փոխանցում եւ բաշխում է շրջանակները՝ յուրաքանչյուր շրջանակի նպատակակետի հիման վրա: Բոլոր փոխարկիչները գործում են առնվազն տվյալների փոխանցման կառավարման մակարդակում (L2).
 21. «անլար ցանցի մուտքի կետ» նշանակում է սարք, որը որպես իր առաջնային ֆունկցիա բազմաթիվ հաճախորդների համար ապահովում է IEEE 802.11 (Wi-Fi) կապակցելիություն.».
- 2) I հավելվածում կատարել հետեւյալ փոփոխությունները.
- ա) որպես նոր 3-րդ կետ ավելացնել հետեւյալը՝

«3. ԷՆԵՐԳԱՍՊԱՌՈՒՄԸ ՑԱՆՑԱՅԻՆ ՍՊԱՍՄԱՆ ՌԵԺԻՄՈՒՄ

Ցանցային հեռուստացույցների դեպքում կիրառվում են հետևյալ պահանջները.

1. 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝

ա) Անլար ցանցային կապակցումը (կապակցումները) ապաստիվացնելու հնարավորությունը.

Եթե ցանցային հեռուստացույցն ունի անլար ցանցին կապակցվելու հնարավորություն, ապա օգտատերը պետք է ունենա անլար ցանցային միացումը (միացումները) ապաստիվացնելու հնարավորություն: Այս պահանջը չի կիրառվում այն արտադրանքների նկատմամբ, որոնք հիմնված են նպատակային օգտագործման համար նախատեսված անլար ցանցային մեկ միացման վրա եւ չունեն որեւէ լարային ցանցի կապակցում.

բ) Էներգիայի կառավարումը ցանցային հեռուստացույցների համար.

Ցանցային հեռուստացույցները պետք է ապահովեն հետևյալ բնութագրերով ֆունկցիա՝

Օգտագործողի կողմից վերջին միջամտությունից եւ (կամ) այլքը փոխելուց հետո աշխատանքի ռեժիմում 4 ժամից ոչ ավելի մնալուց հետո հեռուստացույցն ինքնաբար աշխատանքի ռեժիմից պետք է փոխարկվի ցանցային սպասման ռեժիմի կամ ցանկացած այլ վիճակի, որը չի գերազանցում ցանցային սպասման ռեժիմն ապահովող պայմանների դեպքում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները:

Հեռուստացույցները պետք է էկրանի վրա ցուցադրեն նախազգուշական հաղորդագրություն՝ մինչեւ աշխատանքի ռեժիմից համապատասխան վիճակին/ռեժիմին անցնելը: Այս ֆունկցիան պետք է սահմանվի որպես սկզբնադիր:

Ցանցային սպասման ռեժիմ ապահովող վիճակում էներգիայի կառավարման ֆունկցիան կարող է հեռուստացույցն ինքնաբար փոխարկել անջատված ռեժիմի կամ սպասման ռեժիմի կամ այնպիսի այլ վիճակի, որը չի գերազանցում անջատված եւ (կամ) սպասման ռեժիմների համար էներգասպառման կիրառելի պահանջները:

Էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան պետք է հասանելի լինի ցանցային հեռուստացույցի ցանցի բոլոր միացքների համար:

Էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան պետք է ակտիվացվի, եթե բոլոր անլար ցանցի միացքները չեն ապասկտիվացվել: Այդ դեպքում էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան պետք է ակտիվացվի, եթե ցանցի միացքներից որեւէ մեկն ակտիվացված է.

գ) Այն ցանցային հեռուստացույցը, որն ունի սպասման մեկ կամ մեկից ավելի ռեժիմներ, պետք է համապատասխանի սպասման այս ռեժիմի (ռեժիմների) համար նախատեսված պահանջներին այն դեպքում, երբ անլար ցանցային բոլոր միացքներն ապասկտիվացված են.

դ) Էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմն ապահովող վիճակում.

ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ հեռուստացույցի էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին հեռուստացույցը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով, չպետք է գերազանցի 12,00 Վտ-ը:

Առանց ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորության հեռուստացույցների էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին հեռուստացույցը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով, չպետք է գերազանցի 6,00 Վտ-ը:

2. 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝

Բացի 1(ա) եւ (բ) կետում սահմանված պահանջներից՝ կիրառվում են հետեւյալ դրույթները՝

- ա) Այն ցանցային հեռուստացույցը, որն ունի սպասման մեկ կամ մեկից ավելի ռեժիմներ, պետք է համապատասխանի սպասման այս ռեժիմի (ռեժիմների) համար նախատեսված պահանջներին այն դեպքում, երբ լարային ցանցի բոլոր միացքներն անջատված են, եւ երբ անլար ցանցի բոլոր միացքներն ապակտիվացված են.
- բ) Ցանցային հեռուստացույցը պետք է համապատասխանի 2.2(դ) կետի դրույթներին այն դեպքում, երբ լարային ցանցի բոլոր միացքներն անջատված են, եւ երբ ցանցի բոլոր միացքներն ապակտիվացված են.
- գ) Էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող վիճակում.

ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ հեռուստացույցի էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին հեռուստացույցը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով, չպետք է գերազանցի 8,00 Վտ-ը:

Առանց ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորության հեռուստացույցների էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին հեռուստացույցը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով, չպետք է գերազանցի 3,00 Վտ-ը:

3. 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝

Բացի 1(ա) եւ (բ) կետերում, ինչպես նաեւ 2(ա), (բ) եւ (գ) կետերում սահմանված պահանջներից՝ ՑԲՀ սարքավորումից կամ ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ հեռուստացույցներից բացի ցանցային այլ հեռուստացույցի համար կիրառվում են հետեւյալ դրույթները՝

Առանց ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորության հեռուստացույցների էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին հեռուստացույցը փոխարկվում է էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով, չպետք է գերազանցի 2,00 Վտ-ը:».

բ) 3-րդ կետը դառնում է 4-րդ կետ.

գ) 4-րդ կետը դառնում է 5-րդ կետ.

դ) 5-րդ կետը դառնում է 6-րդ կետ.

ե) 5.1 կետում (նոր 6.1 կետ) «դ» կետից հետո որպես նոր «ե» կետ ավելացնել հետևյալը.

«ե) ցանցային սպասման ռեժիմի համար՝

— ցանցի միացքների քանակը եւ տեսակը՝ բացառությամբ անլար ցանցի միացքների, եւ թե հեռուստացույցի վրա որտեղ են տեղադրված այս միացքները. մասնավորապես պետք է նշվի, եթե նույն ֆիզիկական ցանցի միացքը տեղավորում է ցանցի միացքների երկու կամ ավելի տեսակներ.

— արդյոք ցանցի բոլոր միացքները մինչեւ առաքումն ապաստիվացված են.

— արդյոք հեռուստացույցը որակվում է որպես ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ հեռուստացույց. եթե որեւէ տեղեկություն չի տրամադրվում, ապա հեռուստացույցը չի համարվում ՑԲՀ սարքավորում կամ ՑԲՀ ֆունկցիոնալ հնարավորությամբ սարքավորում:».

զ) 5.1 կետում (նոր 6.1 կետ) նոր «ե» կետից հետո որպես նոր «զ» կետ ավելացնել հետևյալը.

«զ) ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի համար՝

- դեֆոլտային այն ժամանակահատվածը, որից հետո էներգիայի կառավարման ֆունկցիան կամ նմանատիպ ֆունկցիան հեռուստացույցը փոխարկում է ցանցային սպասման ռեժիմ ապահովող վիճակի.
- ազդանշանը, որն օգտագործվում է սարքավորումը կրկին ակտիվացնելու համար.
- (առավելագույն) արտադրողականության տեխնիկական պահանջները.
- հեռուստացույցի (առավելագույն) էներգասպառումը ցանցային սպասման ռեժիմ ապահովող այնպիսի վիճակում, որին սարքավորումը կփոխարկվի էներգիայի կառավարման ֆունկցիայի կամ նմանատիպ ֆունկցիայի միջոցով այն դեպքում, երբ հեռավար ակտիվացման համար օգտագործվում է միայն այս միացքը:

Եթե որեւէ տեղեկություն չի տրամադրվում, ապա հեռուստացույցը չի համարվում ցանցային հեռուստացույց:».

է) 5.1 (ե) կետը դառնում է նոր 6.1(է) կետ.

ը) 5.2-րդ կետում (նոր 6.2 կետ) երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«— յուրաքանչյուր սպասման եւ (կամ) անջատված ռեժիմի, ինչպես նաեւ ցանցային սպասման ռեժիմ ապահովող վիճակի համար՝ էներգասպառման վերաբերյալ տվյալներ՝ արտահայտված Վատտով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդական նիշը.».

3) II հավելվածի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2. Սպասման/անջատված ռեժիմի չափումները եւ ցանցային սպասման ռեժիմի էներգասպառումը

I հավելվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նշված էներգասպառման չափումները կատարելիս պետք է բավարարվեն հետեւյալ պայմանները՝ 2.1(ա) եւ (բ) կետերում, 2.2(ա) եւ (բ) կետերում, ինչպես նաեւ 3.1(դ) եւ 3.2(գ) կետերում նշված էներգասպառումը պետք է սահմանվի վստահելի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգով, որով հաշվի են առնվում լայն ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդները:».

- 4) III հավելվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«**ԱՎԵԼՎԱԾ III**

ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- Ա. *I հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերում սահմանված պահանջների ստուգման ընթացակարգը*

- 1) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգի^(*) 3(2) հոդվածում նշված շուկայի հսկողության ստուգումներ կատարելիս անդամ պետությունների մարմինները պետք է I հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերում նշված կիրառելի պահանջների դեպքում կիրառեն ստուգման հետեւյալ ընթացակարգը:

Անդամ պետությունների մարմիններն անցկացնում են հեռուստացույցի մեկ միավորի ստուգում:

Համարվում է, որ մոդելը համապատասխանում է I հավելվածով սահմանված դրույթներին, եթե՝

- ա) աշխատանքի ռեժիմում էներգասպառման արդյունքը չի գերազանցում I հավելվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերում սահմանված թույլատրելի արժեքն ավելի, քան 7%-ով, եւ

* ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10:

- բ) ըստ կիրառելիության՝ սպասման կամ անջատված վիճակի արդյունքները չեն գերազանցում I հավելվածի 2-րդ մասի 1(ա) եւ 1(բ) կետերով, ինչպես նաեւ 2(ա) եւ 2(բ) կետերով սահմանված թույլատրելի արժեքն ավելի, քան 0,10 Վտ-ով, եւ
- գ) I հավելվածի 5-րդ մասով սահմանված առավելագույն պայծառության հարաբերակցությունը 60%-ից ցածր չէ:

Եթե 1(ա), (բ) կամ (գ) կետերում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա պետք է ստուգվեն տվյալ մոդելի լրացուցիչ երեք միավոր:

2) Լրացուցիչ երեք միավորների փորձարկումից հետո տվյալ մակնիշի արտադրանքը համարվում է առաջին հավելվածի պահանջներին համապատասխանող, եթե՝

- ա) աշխատանքի ռեժիմում նշված երեք միավորների էներգասպառման միջին արդյունքները չեն գերազանցում I հավելվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված թույլատրելի արժեքն ավելի, քան 7%-ով, եւ
- բ) ըստ կիրառելիության՝ սպասման կամ անջատված վիճակում արդյունքների միջինը չի գերազանցում I հավելվածի 2-րդ մասի 1(ա) եւ 1(բ) կետերով, ինչպես նաեւ 2(ա) եւ 2(բ) կետերով սահմանված թույլատրելի արժեքն ավելի, քան 0,10 Վտ-ով, եւ
- գ) նշված երեք միավորների համար I հավելվածի 5-րդ մասով սահմանված պայծառության առավելագույն հարաբերակցությունը փոքր չէ 60%-ից:

Եթե 2(ա), (բ) եւ (գ) կետերում նշված արդյունքներին չեն հասնում, ապա համարվում է, որ մոդելը չի համապատասխանում պահանջներին:

Բ. *I հավելվածի 3-րդ մասում սահմանված պահանջների ստուգման ընթացակարգը*

2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի հսկողության ստուգումները կատարելիս անդամ պետությունների մարմինները, ըստ կիրառելիության, պետք է կիրառեն I հավելվածի 3-րդ մասի 1(դ) եւ 2(գ) կետերում սահմանված պահանջների ստուգման հետեւյալ ընթացակարգը: Նրանք պետք է օգտվեն ներքոհիշյալ կիրառելի ընթացակարգից՝ միավորի ցանցի բոլոր միացքները, ըստ կիրառելիության, ապակտիվացնելուց եւ (կամ) անջատելուց հետո:

Անդամ պետության մարմինները պետք է փորձարկեն մեկ միավոր՝ հետեւյալ ձեւով՝

Եթե հեռուստացույցը, ինչպես նշված է տեխնիկական փաստաթղթերում, ունի ցանցի մեկ տեսակի միացք, եւ եթե առկա են այդ տեսակի երկու կամ դրանից ավելի միացքներ, ապա պատահականության սկզբունքով ընտրվում է այդ միացքներից մեկը, եւ այդ միացքը կապակցվում է միացքի առավելագույն տեխնիկական պահանջը բավարարող համապատասխան ցանցին: Մի քանի նույն տեսակի անլար ցանցի միացքների առկայության պարագայում մյուս անլար միացքները հնարավորության դեպքում պետք է ապակտիվացվեն: I հավելվածի 2-րդ կետում սահմանված պահանջների ստուգման համար մի քանի նույն տեսակի լարային ցանցի միացքների առկայության պարագայում մյուս լարային ցանցի միացքները հնարավորության դեպքում պետք է ապակտիվացվեն: Եթե առկա է միայն մեկ ցանցի միացք, ապա այդ միացքը կապակցվում է միացքի առավելագույն տեխնիկական պահանջները բավարարող համապատասխան ցանցին:

Սարքը դրվում է աշխատանքի ռեժիմի վրա: Սարքն աշխատանքի ռեժիմում պատշաճ կերպով աշխատելուց հետո թույլատրվում է, որ այն անցնի ցանցային սպասման ռեժիմն ապահովող ռեժիմի, եւ չափվում է էներգասպառումը: Այնուհետեւ ցանցի միացքի միջոցով հեռուստացույցին տրվում է համապատասխան ազդանշան, եւ ստուգվում է, թե արդյոք հեռուստացույցը կրկին ակտիվացել է:

Եթե հեռուստացույցը, ինչպես նշված է տեխնիկական փաստաթղթերում, ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի համար ունի մեկից ավելի տեսակի ցանցի միացք, ապա ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի համար կրկնվում է հետեւյալ ընթացակարգը: Եթե առկա են ցանցի միացքների երկու կամ ավելի տեսակներ, ապա ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի համար պատահականության սկզբունքով ընտրվում է մեկ միացք, եւ այդ միացքը կապակցվում է միացքի առավելագույն տեխնիկական պահանջը բավարարող համապատասխան ցանցին:

Եթե ցանցի միացքի կոնկրետ տեսակի դեպքում առկա է միայն մեկ ցանցի միացք, ապա այդ միացքը կապակցվում է միացքի առավելագույն տեխնիկական պահանջները բավարարող համապատասխան ցանցին: Չօգտագործված անլար միացքները հնարավորության դեպքում պետք է ապակտիվացվեն: II հավելվածի 3-րդ կետում սահմանված պահանջների ստուգման պարագայում չօգտագործված լարային ցանցի միացքները հնարավորության դեպքում պետք է ապակտիվացվեն:

Սարքը դրվում է աշխատանքի ռեժիմի վրա: Սարքն աշխատանքի ռեժիմում պատշաճ կերպով աշխատելուց հետո թույլատրվում է, որ այն անցնի ցանցային սպասման ռեժիմն ապահովող ռեժիմի, եւ չափվում է էներգասպառումը: Այնուհետեւ ցանցի միացքի միջոցով հեռուստացույցին տրվում է համապատասխան ազդանշան, եւ ստուգվում է, թե արդյոք հեռուստացույցը կրկին ակտիվացել է:

Եթե մեկ ֆիզիկական ցանցի միացքը բաժանված է (տրամաբանական) ցանցի միացքների երկու կամ ավելի տեսակների միջեւ, ապա այս ընթացակարգը կրկնվում է տրամաբանական ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի համար՝ տրամաբանորեն անջատելով մյուս տրամաբանական ցանցի միացքները:

Մոդելը համարվում է սույն կանոնակարգին համապատասխանող, եթե ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի դեպքում արդյունքները սահմանային արժեքը չեն գերազանցում ավելի, քան 7%-ով:

Հակառակ դեպքում պետք է ստուգման ենթարկել եւս երեք միավոր: Մակնիշը պետք է համարվի սույն կանոնակարգին համապատասխանող, եթե ցանցի միացքի յուրաքանչյուր տեսակի համար վերջին երեք ստուգումների արդյունքների միջինը չի գերազանցում սահմանային թույլատրելի արժեքն ավելի, քան 7%-ով:

Հակառակ դեպքում մոդելը պետք է համարվի չհամապատասխանող:

Անդամ պետության մարմինները պետք է տրամադրեն ստուգման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ մյուս անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին՝ մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Գ. Համապատասխանության ստուգում

Պահանջների հետ համապատասխանությունն ստուգելու նպատակով անդամ պետությունների մարմինները պետք է օգտվեն II հավելվածով սահմանված ընթացակարգից, ինչպես նաեւ վստահելի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերից, որոնցով հաշվի են առնվում չափման լայն ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդները, այդ թվում՝ այն մեթոդները, որոնք սահմանված են այն փաստաթղթերում, որոնց համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*:»:

*Հոդված 3***Ուժի մեջ մտնելը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2013 թվականի օգոստոսի 22-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ
